

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ, ՈՐ ԱՐԴԵՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է

«Ձի ուղիղ են ճանապարհք Տեառն,
 Էւ արդարք գնասցեն ընդ նոսա,
 Էւ ամբարիշտք տկարացին ի նոսա...»:

(Ձեռնադրության Մաշտոց)

Երկնառաք վարդապետի ճշմարիտ ուսուցումների մշտանորոգ սերմնացաններն արդեն քանի տարի անմնացորդ նվիրումով դեպի անմարելի յույսն են առաջնորդում մատաղ սերնդին, օգնում քայլել անխոտոր ու անվարան, զի այն ժամանակ է ծառն ավելի առատ պտղաբերում, երբ մշակը հավատարիմ է ու սրտացավ:

Այս վեճ գիտակցումով էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Բիքֆայայի Զարեհյան Դպրեվանքում ի մի եկել Հայաստանյայց Եկեղեցու Կիրակնօրյա դպրոցների շուրջ 130 ուսուցիչ-ուսուցչուհիներ, որ ժամանել էին Լիբանանից, Սիրիայից, Քուվեյթից, Կիպրոսից:

Այս անգամ համաժողովին Մայր Հայրենիքից մասնակցում էր 14 պատգամավոր:

1. «Ախր ուրիշ տեղ ես ինչպե՞ս մնամ...»

Հայաստան, երկիր դրախտավայր... Հայր հենց այնպես, պատահականորեն չէր գրի այս տողերը, հետո չէր երգի ու հնչեցնի Երկիր մոլորակի տարբեր անկյուններում:

Հայաստան. դու մերն ես հարատև: Մեր մշտամորմոք հորովելն ես ու պանդուխտից «խարրիկ» չունեցող կոռունկը, մեր նախնյաց ձեռքով ես անթեղվել նվիրյալ զավակներիդ սրտերում: Բայց առավել թանկ ես, երբ քեզ դիտում ենք մեր փոքրիկ խմբին ի տարաշխարհ տանող օդանավի պատուհանից:

Հիմա մենք հեռվում ենք, սակայն, մորը մշտապես տենչացող զավակի մման, ձգում, կա՛ում ես մեզ՝ հեռվում գտնվող քո ձագերին, կիրակնօրյա դպրոցների այն մի բուռ նվիրյալներին, ովքեր այսօր փորձում են իրենց սերն ու հավատը լիովին ի սպաս դնել դեպի Միակն ու Կատարյալը տանող ճանապարհի զոհասեղանին, և ովքեր, որպես հայրենիքի ներկայացուցիչներ, իրենց մասնակցությունն են բերել կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների հերթական միջբեմական խորհրդաժողովին:

Մեզանից յուրաքանչյուրն, իրավամբ, հիմա է լիովին ընկալում հայրենիքը հեռվից սիրող ու զգացող հային, նրա կարոտն ու պայծառատես հավատը, որ անլռելի զանգակատուն է ու անմեկնելի երազ: Իսկ ինձ համար այն պարագրվում է այս մի հատիկ տողում. «Ախր ուրիշ տեղ ես ինչպե՞ս մնամ...»:



Օդանավի պատուհանից մեր աչքերի առջև հառնում է Լիբանանի սիրտը: Դե ինչ, ողջույն, Բեյրութ: Ողջույն մահ քեզ երիզող Միջերկրական ծովին: Ահա և մեր ոտքերի տակ գգում ենք օտար հողը: Օդանավակայանում մեզ մեծ անհամբերությամբ են սպասում տեղի հայկական գաղութի ներկայացուցիչները՝ Կիրակնօրյայի մեծ ընտանիքի անդամները:

Իսկ այս ճանապարհը, գիշերային լույսերով բոցավառ Բեյրութով, մեզ տանում է դեպի Բիքֆայա:

2. « Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի
զամենայն ճանապարհս չարաց... » (ՍԱՂՄ. ԾԺԸ)

Հայաստանյայց Եկեղեցվո Կիրակնօրյա դպրոցների ուսուցչական կազմերի հերթական միջթեմական համագումար-խորհրդածողովք, որ կրում էր « Ըմանալ ենք մեր Եկեղեցին » խորագիրը, նախագահությամբ և հովանավորությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Հայրապետի, բացվեց սույն թվականի օգոստոսի 20-ի հետմիջօրեին:

Ներկաների թվում էին միաբան հայրեր, արժանապատիվ տեր հայրեր, բարեշնորհ սարկավազներ, կրոնական դաստիարակության խորհուրդների և ՀԵԿԳՕՄ-ի կազմերի ներկայացուցիչներ:

Մասնակիցները հոտնկայս երգեցին Հայաստանի Հանրապետության Կիրակնօրյայի մաղթերգերը, ապա բացման խոսքով հանդես եկավ վարիչ-տնօրեն հոգեշնորհ Տ. Սեպուհ Ծ. վարդապետ Սարգիսյանը:

Իմաստավորելով մանկան հոգևոր դաստիարակության դերն ու նշանակությունը ազգակերտման դժվարին, սակայն անչափ գնահատելի ճանապարհին, Հայր Սուրբը ներկաների ուշադրությունն ի մասնավորի հրավիրեց հայոց համազգային դարձին դեպի իր արմատները և Հայաստանում քրիստոնեության անցած 1700-ամյա ուղուն, կարևորեց այն մտադրությունը, որ Հայաստանյայց Կիրակնօրյա դպրոցների հետագա միջթեմական խորհրդածողովները, մինչև 2001 թվականը, կկազմակերպվեն « Ըմանալել Հայաստանյայց Եկեղեցին իր ամբողջության մեջ » կարգախոսով: « ...Իբրև Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներ, հարկ է գիտութեամբ զինուիլ, - շարունակեց հայր Սեպուհը, - որովհետև գիտութիւնը, իրական գիտութիւնը, առաքինութեամբ օծուն, շատ թանկ եւ ազնիւ շնորհք է, որ մահկանացու մարդը անմահութեան կ'առաջնորդէ: Չմոռնանք, որ մեր ժողովուրդին գանձը իր սերունդն է, իր մանուկներն են, ու մենք այդ մանուկները դեպի Աստուած, Եկեղեցի ու ազգ առաջնորդողներն ենք »:

Մեկ առ մեկ թվարկելով մանկան կրթությունն ու հոգևոր դաստիարակությունը հանձն առած մանկավարժի նկարագիրն ամբողջացնող առավել նշանակալից հանգամանքները, վարիչ-տնօրենն իր խոսքն ավարտեց այսպես. « ...Լեցուի՞նք Քրիստոսով եւ իր Եկեղեցույ կեանքով

ու մեր ժողովուրդին պատմութեամբ, որպէսզի կարենանք ըլլալ իրական ու վազերական մշակներ Եկեղեցւոյ ու ժողովուրդին սրբազան աւանդներուն եւ այսօրուան անկախ ու վաղուան միացեալ ու ամբողջական հայրենիքին եւ ամբողջական հայութեան»:

Խորին ակնածանքով ու խոնարհութեամբ ամենքն ունկնդրեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ե.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի ողջույնի հղված խոսքը՝ ուղղված Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների միջբեմական խորհրդատողովի մասնակիցներին, ուր ասվում էր. «Հոգեշնորհ Հայր Սուրբ, կը շնորհատրենք Ձեզ, որ իբրև գլխաւոր նիւթ ընտրած էք Հայաստանեայց Եկեղեցւոյ հետ ուսուցիչներու առաւել եւս սերտացման գաղափարը՝ «Մանչնալ Հայաստանեայց Եկեղեցին» խորագրին տակ: Ճանչնալ քառք շատ աւելի խոր ու լայն տարածք ունի, քան զիտնալ քառք: Սոսկ ծանոթացման հարց չէ ճանչնալը, այլ հաղորդութեան, ճանցող աճմին մէջ ներթափանցումովը ճանչցածին, միաշաղախումովը անոր էութեան եւ գոյութեան տարբերուն հետ: Մանչնալ կը նշանակէ տրամախոհական, յիշողական հանգրուաններէն անդին անցնիլ և մեր մարդկային գոյութեան, լինելութեան ու առաքելութեան հետ ընդելուզել այն, ինչ-որ կը ճանչնանք: Պարզ խօսքով՝ ճանչնալ կը նշանակէ պատասխանատուութիւն զգալ ճանչցածն ուրիշին ճանչցնել տալու նախանձախնդրութեամբ»:

Ահա այս հիմնական մտահայեցողութեամբ կը մաղթենք, որ համագումարը վերածուի ներքին շարժումի մը, վերանորոգութեան, վերաշխուծացման ձգտումի մը քոյր մասնակցողներուն համար անխտիր»:

Այնուհետև կիրակնօրյայի մեծ ընտանիքի ներկայացուցիչներին իր հայրական պատգամ-ողջույնը հղեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ե.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Հայրապետը. «20-րդ դարու Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմագիրը, երբ կը խօսի Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու հսկայ դերակատարութեան մասին, արդարօրէն կըսէ, որ կիրակնօրեայ դպրոցները հիմնուեցան Անթիլիասին մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ:

Կիրակնօրեան եղաւ այն ճառագայթող ու կանգուն կառոյցը, ուրկէ անցան սերունդներ՝ լեցուելու համար աւետարանական սկզբունքներով ու նշմարտութիւններով, մեր Եկեղեցւոյ հոգեմտաւոր արժեքներով, մեր ժողովուրդին աւանդոյթներով ու սրբութիւններով»:

3. Հընթացս համաժողովի

Այս համաժողովում անդրանիկ դասախոսությունը կարդալու պատիվը տրվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ե. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Հայրապետին՝ «Հայաստանյայց Եկեղեցին քրիստոնեական Եկեղեցիների ընտանիքում» խորագրով:

Մինչ դասախոսությունը, ներկաների կատարմամբ հնչեցին «Աշակերտը Քրիստոսի» և «Որք զարդարեցին» շարականները:

Առաջին օրն ավարտվեց փոխադարձ ծանոթության հավաքությամբ:

Միջթեմական համաժողովի հետագա վեց օրերին ներկա ուսուցիչ-ուսուցչուհիներն առիթ ունեցան ունկնդրելու հոգեշնորհ Տ. Սեպուհ Մ. վարդապետ Սարգիսյանին, Տ. Մեղրիկ վարդապետ Բարիքյանին, Տ. Բարկեն վարդապետ Չարյանին, Տ. Պարթև արեղա Կյուլումյանին, Տ. Մաշտոց արեղա Չորանյանին, բարեշնորհ Նուրբար սարկավազ Բերքերյանին: Ունկնդիրներին հոգեհարազատ ու սրտամու, էր նրանց դասախոսությունների թեմատիկան, ուր տեղ էին գտել Աստվածաշնչյան մեկնությունները, մեր կյանքում Հայաստանյայց Եկեղեցու և քրիստոնեության դերին ու նշանակությանն առնչվող հարցերը:



ԱՐԱՍ Ա ՎԵՅԱԺՈՒՆ ԵՐԶԱՄԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՎ

Մեծ հետաքրքրությամբ լսեցին հայրենիքի՝ Հայաստան աշխարհի կիրակնօրյա դպրոցները ներկայացնող բանախոսներին՝ Մարիամ Վարդանյանին և Հասմիկ Նալբանդյանին, ինչպես նաև կիրակնօրյա դպրոցների փոխվարիչ-տնօրինուհի տիկին Աստղիկ Մ. Թաշնյանին, ուսանելի դասեր քաղեցին Կիպրոսի կիրակնօրյա դպրոցները ներկայացնող տիկին Անահիտ Էսքիջյանի դասախոսությունից, որ վերածվեց կատարյալ խանդավառության:

Հայաստանցի ուսուցիչների համար մեծ նշանակություն ունեին նաև խորհրդակցական ժողովները:

Համաժողովի գեղեցիկ ու անմեկնելի սովորության համաձայն, օգոստոսի 25-ի առավոտը բոլոր մասնակիցների համար սկսվեց ժամերգությամբ: Ապա Բիքճայայի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ, որին մասնակցում էր նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետը: Օրվա

պատարագիչն էր հոգեչնորհ Տ. Սեպուհ Ծ. վարդապետ Սարգիսյանը: Հրճոթաց Սուրբ Պատարագի կատարվեց հավաքական խոստովանություն: Ուսուցչական ողջ կազմը, հաղորդակից դառնալով Սուրբ Հաղորդության խորհրդին, նաև մտովի ուխտում էր մնալ Ամենակարող Տիրոջ մշտադալար այգու արթուն և հավատարիմ մշակը, խոնարհաբար և սրտի թրթիռով ծառայել յուրաքանչյուր թուփ ու ծառի կամ, այլ խոսքով ասած, որպես մշտավառ կանթեղներ, մանկանց հոգիներում սփռել Տիրոջ խոսքերի յխամրող լույսը:

Հավարտ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի խաղաղություն կիրակնօրյա դպրոցների երջանկահիշատակ հիմնադիրների հոգիների:

Երեկոն եզրափակվեց խարույկահանդեսով: Մասնակիցներն իրենց զրական-գեղարվեստական գեղեցիկ հայտագիրն ավարտեցին ավանդական շուրջպարով, որ նաև բարեկամության պարն էր ու հայոց մշտանորոգ կյանքով խանդավառված ազգիս դեպ անմահություն առաջնորդող ոգեկոչումի պարը:

28 օգոստոսի, երկուշաբթի: Խորհրդածողովի բոլոր մասնակիցների և հատկապես հայաստանցիներին հիշողության մեջ այն կմնա որպես հրաժեշտի օր: Աստվածային սիրո հրաշագործ գործությանը մոտիկից ծանոթ այս մի բուռ հայորդիների համար, աշխարհի որ ծայրում էլ լինեն, հայրենիքը, ազգը մեկն է: Հայի ոգին տարածություն, ժամանակ և չար խորհուրդ չի ճանաչում: Ուստի բաժանումից առաջ, որպես մի նոր, առավել ջերմ հանդիպման առհավատչյալներ, ամեն ոք իր հետ տուն է տանում մտերմի հրաժեշտի համբույրը, գալիք տեսության բաղձալի փափագը: Իսկ այս ամենից առաջ, համատեղ լուսանկարվելուց հետո, բոլորին իր հայրական պատգամն է հղում Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Հայրապետը՝ հիշեցնելով, որ տունդարձով չվերջակետվի համատեղ անցկացրած այս մեկ շաբաթը: Ամեն ոք պարտավոր է իր լսածն ու ուսանածը գործի վերածել, զի հավատն առանց գործի մեռած է:

Դե ինչ, մնաա բարով, Բիքֆայա, մենք դեռ կտեսնվենք: Նաև բարի վերադարձ, սիրելի՛ք...:

Արևաշող երկրիս ներկայացուցիչների համար ամեն ինչ վերջացած չէ: Մեզ նույնքան սիրով են հյուրընկալում Անթիլիասի Մայրավանքում: Այստեղ բառացի դասախոսություններ չկան, սակայն ամեն մի քարից, թփից ու ծաղկից անհիմանալի դաս ենք առնում:

Խորին երկյուղածությամբ ու ակնածանքով ենք խոնարհվում Հայոց Մեծ Եղեռնի անմեղ նահատակների հիշատակն անմահացնող մատուռում ամփոփված ոսկորների՝ տեսանելի ու շոշափելի այս վկայությունների առջև, հարգանքի տուրք մատուցում ազգիս զավակներին հավատքի ուղիով դեպի հավերժություն առաջնորդած Հայրապետների շիրիմներին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում մեր երկնառաք աղոթքով հայցում Բարձրյալի սերն ու գուրք:

**

Ամեն մի օր նոր անակնկալ ունի: Առավել գնահատելի էր մեր փոքրիկ խմբի այցելությունը Կիլիկյան Աթոռի Մատենադարան, որի պաշտոնական բացումը կլինի միայն մոտ ապագայում, ինչպես նաև թանգարանային բաժին:

Առավել տպավորիչ էր հանդիպումը Վեհափառ Հոր հետ:

Հաջորդ օրն սկսվեց Բեյթ ըլ Դին պալատի այցելությամբ, մի կառույց, որ լուսնի մահիկի տեսք ունի իր չորս համալիրներով: Այդ իսկ պատճառով էլ կոչվում է նաև Լուսնաձև պալատ: 30 հազար քառակուսի մետր տարածքով պալատի ամբողջական շինարարությունն ավարտվել է միայն 1840-ին:

Այստեղից ճանապարհը մեզ տանում է դեպի Ազունիեի Ազգային հիվանդանոց, ապա Այնճար՝ փոքրիկ Հայաստան, որ հիմնել են Մուսա լեռան հերոսամարտից մազապուրծ հայերը և կյանքի գնով պահպանել նախնյաց նվիրական ավանդույթներն ու սովորույթները: Այստեղ նախ հյուրընկալվեցինք Այնճարի հոգևոր հովիվ արժանապատիվ Ս. Աշոտ ավագ քահանա Կարազաշյանի տանը, ապա եղանք Սուրբ Պողոս եկեղեցում, այցելեցինք Մուսա լեռան ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթող, Գալուստ Կյուլպենկյան Ազգային երկրորդական վարժարան, հոռմեական հնագույն ամրոցի ավերակներ:

Օգոստոսի 30-ի օրը բացառիկ հիշարժան էր: Հայաստանցի հյուրերն առիթն ունեցան ծանոթանալու «Թռչնոց բույն» մանկատան պատմությանը, ականջալուր լինելու գերաշնորհ Ս. Ջարեհ արքեպիսկոպոս Ազնավուրյանի ողջույնի ու բարիգալստյան խոսքին:

4000 տարվա պատմություն ունեցող Բիրյոս բերդը տպավորիչ էր իր պատմական հիշատակներով: Վաղեմի փառքն այսօր թԷև միայն հուշ է և անմոռանալի հիշողություն, սակայն բերդն ասես դժկամությամբ է ընկրկում՝ իր վեհ ու խրոխտ նայվածքի տակ առնելով Միջերկրական ծովի անպարագրելի կապույտը: Չմոռանանք ասել, որ հենց այս բերդում է հորինվել աշխարհում առաջին այրուրեները, որ նաև կոչվել է քանակյան:

Օրը դեռ իր հեքի մեջ էր: Մեր փոքրիկ խումբն Անայայի շրջանում այցելեց Սուրբ Շարբելի եկեղեցահամալիր-թանգարան: 19-րդ դարում ապրած և գործած Սրբի անվան հետ մեծ թվով հրաշքներ են կապվում: Մենք նույնպես խոնարհվեցինք օտարազգի քրիստոնյա այս Սրբի շիրմին (Հոռմեական եկեղեցին վերջինիս սրբացրել է 1977-ին), խնդրեցինք նրա բարեխոսությունը՝ սովորական մահկանացուներին առաջնորդելու դեպի Տերը տանող նեղ ու դժվարին, սակայն այնքան քաղցր ու բաղձալի ուղով:

4. Մնաս բարով, Բեյրութ

Մենք քեզ դեռ շատ երկար ենք հիշելու: Մեր հոգում ապրելու է հետագա օրերի վերհուշը, հրաժեշտի այս երեկոն, բոլոր նրանք, ովքեր այս կարճ ժամանակում մեր կողքին եղան:

Բաժանումը դժվար է: Սակայն հրաժեշտից է հենց սկսվում հաշորդ հանդիպումը, որն առավել ջերմ է լինելու ու մտերմիկ ինչպես հայոց երկրիս արեգակը, ճերմակ ու մաքրամաքուր՝ ինչպես հայրենիքիս ծաղկած ծիրանենին, խորն ու անմեկնելի՝ ինչպես Աստվածառաք, Լուսավորչահաստատ հավատքը նախնյաց, և անմարելի՝ ինչպես մեր հավատի հոր երկնից կախված կանթեղը:

Ծնորհակալություն և ի տեսություն: Վաղն արդեն օդանավը մեզ հայրենիք՝ տուն կտանի, իսկ մենք կտանենք Ձեր սերը, նվիրումը և կարոտն անափ ու անեղծելի..., որ պիտ անթեղենք մեր հոգիներում, զի հաջորդ տարի հենց այդ սիրո ջերմ կայծերից ենք կրկին բոցավառելու մեր նոր հանրագումարի հերթական խարույկը՝ ի սեր ազգիս հայոց, ի հաստատագրումն քարեկամության և հանձնառություն հայոց հավատքի. ամեն...

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԾԱՆ